COMMITTEE OF MINISTERS
COMITÉ DES MINISTRES
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐ | Հանձնարարականներ | CM/RecChL(2020)6 | 8-ը դեկտեմբերի, 2020թ.

Նախարարների կոմիտեի CM/RecChL(2020)6 հանձնարարականը Հայաստանի կողմից Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կիրառման վերաբերյալ

(Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից, 2020թ. դեկտեմբերի 8-ին, Նախարարների տեղակալների 1391-րդ նիստում)

Նախարարների կոմիտեն,

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի 16-րդ հոդվածին համապատասխան,

հաշվի առնելով Հայաստանի կողմից 2002 թվականի հունվարի 25-ին ի պահ հանձնված վավերացման փաստաթուղթը,

հաշվի առնելով Խարտիայի Փորձագետների կոմիտեի իրականացրած գնահատումը Հայաստանի կողմից Խարտիայի կիրառման վերաբերյալ,

հաշվի առնելով, որ այդ գնահատումը հիմնված է Հայաստանի կողմից նրա հինգերորդ պարբերական զեկույցում ներկայացված տեղեկությունների, Հայաստանի իշխանությունների կողմից ներկայացված հավելյալ տեղեկությունների, Հայաստանում օրենքով սահմանված կարգով ստեղծված մարմինների և միությունների կողմից ներկայացված տեղեկությունների և Փորձագետների կոմիտեի աշխատանքային այցի ընթացքում ձեռք բերված տեղեկությունների վրա,

հաշվի առնելով Փորձագետների կոմիտեի զեկույցի բովանդակության վերաբերյալ Հայաստանի իշխանությունների կողմից կատարված մեկնաբանությունները՝

առաջարկում է, որ Հայաստանի իշխանությունները հաշվի առնեն Փորձագետների կոմիտեի բոլոր դիտարկումներն ու հանձնարարականները և որպես առաջնահերթություն՝

1. նպաստեն նախադպրոցական կրթության գոնե մի զգալի մասի ապահովմանը ասորերեն, հունարեն, քրդերեն և եզդիերեն լեզուներով.

2. բարելավեն փոքրամասնությունների լեզուների դասավանդումը տարրական և միջնակարգ կրթության ոլորտում՝ շաբաթական դասերի թվի ավելացման, ուսուցիչների վերապատրաստման և ուսուցման ժամանակակից նյութերի ստեղծման միջոցով.

3. սկսեն ասորերեն, հունարեն, քրդերեն և եզդիերեն լեզուներով կանոնավոր կերպով և բավարար տևողությամբ հեռուստատեսային ծրագրի հեռարձակումը հանրային հեռուստատեսությամբ.

4. ձեռնարկեն քայլեր՝ երաշխավորելու, որ ասորերեն, հունարեն, քրդերեն, ռուսերեն և եզդիերեն խոսողները կարող են իրենց լեզուն օգտագործել վարչական և դատական մարմինների հետ շփման ընթացքում.

5. խթանեն համապատասխան համայնքներում փոքրամասնությունների լեզուներով տեղանունների կիրառումը կամ ընդունումը.

6. տրամադրեն բավարար ֆինանսական միջոցներ՝ ինչպես մշակութային գործունեության համար, այնպես էլ՝ ազգային փոքրամասնությունների միություններին՝ տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուների խթանումը, ներառյալ այդ լեզուներով արտադպրոցական կրթությունն ապահովելու համար։

Նախարարների կոմիտեն հրավիրում է Հայաստանի իշխանություններին տեղեկություններ տրամադրել Փորձագետների կոմիտեի 5-րդ գնահատման զեկույցում ներառված գործողությունների հետ կապված սույն հանձնարարականների վերաբերյալ մինչև 2021թ. մայիսի 1-ը։[1]

[1] Տես Նախարարների կոմիտեի որոշումները՝ CM/Del/Dec(2018)1330/10.4e.